ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 19.12.2016թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 24Ա

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19 -ի թիվ 8 նիստի օրակարգը՝

1. Գոռավան համայնքի 2016 թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին:
2. Գոռավան համայնքում 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :
3. Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի և <<Գոռ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2017 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Գոռավան համայնքի 2016թվականի տարեկան բյուջեի փոփոխման մասին:
5. Գոռավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության հողերից օտարելու նպատակով տարածքներ առանձնացնելու մասին:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 19.12.2016թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 25Ա

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 14.11.2016թվականի թիվ 19 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովի եզրակացությունը և կազմած ակտը, համայնքի ավագանին որոշում է՝

1. **Հաստատել Գոռավան համայնքի 2016 թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները /հավելված 1/:**

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 19.12.2016թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 26Ն

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արարատի մարզի Գոռավան համայնքում 2017թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրուքաչափերը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների/ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույտվության համար տեղական տուրք սահմանվում է՝

1. *Հիմնական օբյեկտների համար.*

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բ.ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար *28000* դրամ:

բ.բ)501—ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար *50000* դրամ:

բ.գ) 1001 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար *70000* դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար *3000* դրամ:

գա)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար *5000* դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման, վերականգման աշխատանքների, բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի համար /եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն *3000* դրամ:

բ)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, արդիականացման, վերականգման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, եթե այն համարվում է նոր շինարարություն, ապա կիրառվում են նոր շինարարաության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

*3.*Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է *5000* դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է
ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար *2000* դրամ:
բ/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
բ/հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *150000* դրամ:
գ/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝ *3000* դրամ:
ոչ հիմնական շինությունների ներսում՝ *500* դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *1000* դրամ:
բ/թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *2500* դրամ:
գ/այլ արտաքին գովազդի համար՝ *500* դրամ:
դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ *700* դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար սահմանել *1000* դրամ:

8. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է *70.000* դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *8000* դրամ:

Տեղական վճարներ

1/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողերի հատկացման, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում չափագրական աշխատանքների համար վճար՝ *1000* դրամ:

2/ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնացության վճար *5000* դրամ:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱՁԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 19.12 .2016թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 27Ն

ԳՈՌԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ԳՈՌ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի և <<Գոռ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1,2, 3,4 հավելվածների:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 19.12 .2016

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 28Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Քննարկելով և հիմք ընդունելով որոշման նախագիծը, հաշվի առնելով ավագանիների առաջարկությունները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է

Բյուջեի եկամտային մաս

1. Հողի հարկի պլանը ավելացնել 400,0 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 6400,0 հ. դրամ:
2. Գույքահարկ փոխադրամիջոցներից պլանը ավելացնել 1400,0 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 5900,0 հ. դրամ:
3. Այլ ոչ հարկային եկամուտներ պլանը պակասեցնել 916,9 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 2883,1 հ դրամ:

Բյուջեի ծախսային մասում

1. <<Կառավարման մարմնի պահպանում>> գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4212 հոդվածի պլանը ավելացնել 161,8 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 1011,8 հ. դրամ:

2. Փողոցների լուսավորություն
   ա) 4212 հոդվածի պլանը պակասեցնել 532,0 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 3368,0 հ. դրամ:
   բ) 4251 հոդվածի պլանը ավելացնել 352,0 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 952,0 հ. դրամ:

3. Ջրամատակարարման 4264 հոդվածի պլանը ավելացնել 180.0 հ. դրամով:
   Ճշտված պլանը սահմանել 1480,0 հ. դրամ

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 19.12.2016թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 29Ա

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է

1.Գոռավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության հողերից առանձնացնել հետևյալ հողատեսքերը.

1. 0249-0004-ից	0.0200հա	գյուղ. նշ. այլ	արաքսյան գոտի
2. 0171-0022-ից	0.10հա	գյուղ. նշ. արոտ	
3. 0249-0004-ից	6.0հա	գյուղ. նշ. այլ	արաքսյան գոտի
4. 0249-0004-ից	4.7հա	գյուղ. նշ. այլ	արաքսյան գոտի
5. 0249-0004-ից	1.1հա	գյուղ. նշ. այլ	արաքսյան գոտի
6. 0249-0004-ից	2.7հա	գյուղ. նշ. այլ	արաքսյան գոտի

2.Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության հողերից ըստ գործառնական նշանակության և գոտիների:

3. Մեկնարկային գին սահմանել համապատասխանաբար տվյալ հողատեսքի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Վարդանյան Սուրեն

Համայնքի ղեկավար՝ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ